


Ն. ՍԵՐԱՇԿՈ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Ленинградского  
СССР

ԿԱՌՈՒՑԵՆՔ  
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ  
ԴԻՐԻԺԱԲԼՆԵՐ



ԽՅՀԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ԻՐԱՆԻ Ա.

1931

629.13

4-38

629.13  
U-38

04 AUG 2010 C 31-11  
1979  
345

Ն. ՍԵՄԱՇԿՈ

ԿԱՌՈՒՑԵՆՔ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ  
ԴԻՐԻՔԱԲԼՆԵՐ



ԽԱՆՈՒ ԺՈՂՈՎԱԴԻՐ. ԿԵՏՐՈՆ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՈՒՆ  
ՄՈՍԿՎԱ

1931

30 JUL 2013

14569

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ИСТОРИКО-ЭКОНОМИЧЕСКИХ  
НАУК  
Академии Наук  
СССР

Թարգմ. Ս. Հ.



59293 - 66

Главлит № А-85.368      Заказ № 361.      Тираж 5.000  
Книжная ф-ка Центриздата Народов СССР. Москва,  
Шлюзовая набережная, 10.

## ԴԻՐԻՓԱԲԼԸ ԻՐԵՎ ՄԵՐ ՈԳՆԱԿԱՆԸ՝ ԽԱՂԱՂ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սովառնականները (աերոպլաններ) հաղորդակցության սքանչելի միջոց են. նրանք թեթև են, արագաշարժ, մի ժամվա ընթացքում 200 և ավելի կիլոմետր են անցնում, համեմատաբար այնքան ել թանգ չեն, հարմար են թե խաղաղ աշխատանքի և թե պատերազմական նպատակների համար: Մեր ողային նավատորմը արագ է աճում: Այժմ արդեն չկա գրեթե վոչ մի խոշոր հիմնարկ կամ ձեռնարկություն, վոչ մի պրոֆմիություն, վորոնց անունները, կարմիր աստղի կողքին, գրված չլինեյին խորհրդային աերոպլանների վրա:

Դիրիփաբլը, վորպես ողային հաղորդակցության միջոց, ունի մի

շարք չափազանց արժեքավոր հատկություններ, վորոնցից դուրկ ետերոպլանը: Այդ հատկություններից ամենազլխավորն է — հեռավոր թռիչքների ընդունակությունը առանց դադարի: Ամենագորեզ դիրիժաբլները կարող են թռչել առանց դադարի մինչև 118 ժամ, մինչդեռ ամենալավ սավառնակները կարող են թռչել առանց դադար առնելու միայն մինչև 50 ժամ:

Նորերս Մոսկվա այցելած գերմանական «Գրաֆ Ցեպելին» դիրիժաբլը 1929 թվականին կատարեց հռչակավոր թռիչք ամբողջ յերկրագնդի շուրջը, անցնելով 35 հազար կիլոմետր տարածություն և ունենալով միայն յերեք դադար: Ամբողջ այդ տարածությունը նա անցավ 21 որվա ընթացքում, վորոնցից ողի մեջ անցկացրեց միայն 12 ուր, իսկ մնացած ժամանակը — դադարի կայաններում: Վոչ մի այլ միջոցով — վոչ ողային, վոչ յերկրային և վոչ ել ծովային հա-

ղորդակցության — չեր կարելի այդպիսի ճանապարհորդություն կատարել այդչափ կարճ ժամանակամիջոցում:

Համեմատենք դիրիժաբլով ճանապարհորդելու տեղությունը հաղորդակցության սովորական միջոցների հետ (ծովով կամ ցամաքով): Մոսկվա — Տաշքենտ տարածությունը դիրիժաբլը անցնում է 29 ժամում, այսինքն համարյա թե մի ուրում, իսկ ցամաքով — նույն իսկ ամենաճեպնթաց գնացքով պետք է գնալ  $5\frac{1}{2}$  ուր: Մոսկվա — Տոմսկ տարածությունը դիրիժաբլով կարելի յե անցնել 19 ժամում, իսկ ճեպընթաց գնացքով — 4 ուրում: Յեվրոպայի և Ամերիկայի միջև յեղած տարածությունը դիրիժաբլով կարելի յե ծածկել 2—3 ուրում, իսկ ծովով — նույն իսկ ամենաարագ նավով — վեց ուրից վոչ պակաս: Անգլիայից Ավստրալիա դիրիժաբլով կարելի յե հասնել 10 ուրում, իսկ ցամաքով ու ծովով այդ ճանապարհորդությունը կարելի յե կատարել միայն 30—35 ուրում:

Յեվ, վոր առանձնապես հետաքրքրական  
 Ե, Յեվրոպայից Ալյասկա—Հյուսիսային բևե-  
 ուի վրայով—դիրիժաբլով կարելի յե թռչել—  
 հասնել 3 օրում, իսկ հաղորդակցության և  
 վոչ մի այլ միջոցով, — վոչ ցամաքային և  
 վոչ ել ողային, առանց դադարի—անցնել  
 այդ տարածությունը հնարավոր չե։ Դիրի-  
 ժաբլի այդ հատկությունը բացառիկ կարևոր  
 նշանակություն ունի հենց մեր յերկրի  
 պայմաններում. ԽՍՀՄ-յությունը յերկրա-  
 գնդի մեկ վեցերորդ մասն է գրավում. մեր  
 յերկրի ահագին տարածությունները շատ  
 հաճախ զուրկ են հաղորդակցության վորևե  
 ուղիներեց (Սիբիրի տայգան, հյուսիսային  
 անտառները, արևմտյան ճահճուտները և  
 այլն)։ Յերկաթուղային ցանցը մեր յերկ-  
 րում չափազանց նոսր է, խճուղիները քիչ  
 են և շատ հաճախ անկարգ վիճակի մեջ են  
 գտնվում։ Այդպիսի պայմաններում դիրիժաբ-  
 լով ահագին տարածությունները առանց

դադարի անցնելու հնարավորությունը բա-  
 ցառիկ կարևորություն է հանդիսանում։

Դիրիժաբլի մյուս ահագին առավելու-  
 թյունն է նրա մեծ բեռնաբարձունա-  
 կությունը։ Դիրիժաբլը կարող է բարձ-  
 րացնել մինչև 60 տոննա բեռ։ Դիրիժաբլի  
 մեջ սովորաբար սարքվում է բավականին  
 հարմար շենք ուղևորների համար։ Այդպի-  
 սով, դիրիժաբլները կարող են փոխադրել  
 ծանր բեռներ և խոշոր թվով մարդիկ։

Հեշտ է պատկերացնել, թե վորպիսի մեծ  
 նշանակություն ունեն մեր յերկրի տնտե-  
 սական և կուլտուրական զարգացման համար  
 դիրիժաբլի այդ հատկությունները։ Դիրիժա-  
 բլի ոգնությամբ հեշտ է արագ և հարմար հա-  
 ղորդակցություն հաստատել կենտրոնի և ամե-  
 նահեռավոր ծայրագավառների միջև։ Ամեն  
 մեկը հասկանում է, թե վորքան արժեքավոր է  
 դա։ Մեր կենտրոնական հիմնարկները կկա-  
 րողանան ավելի լավ ղեկավարել աշխատանքը  
 տեղերում — կարելի յե ուղարկել հրահան-

գիշներ և առհասարակ աշխատողներ, արագ տեղ կհասնի փոստը: Կբարձրանա բնակչության կուլտուրական մակարդակը, վորովհետև արագ կստացվեն լրագրեր, ժուռնալներ, գրքեր: Շուտափույթ կերպով մթերքներ կամ ապրանքներ պահանջվելու դեպքում — կարելի չե ուղարկել դրանք դիրիժաբլով: Վորքան կարևոր կլինեն այդպիսի կապը Կամչատկայի\* կամ Սախալինի\*\* հետ, Հեռավոր Հյուսիսի կամ Անդրկովկասի հետ: Կանոնավոր հաղորդակցությունը դիրիժաբլներով ահագին նշանակություն կունենար մեր յերկրի հեռավոր ծայրագավառների թե տնտեսական, թե կուլտուրական և թե վարչական զարգացման համար:

Հեռավոր ծայրագավառների հետ դիրիժաբլի միջոցով հաղորդակցություն ունե-

\* Կամչատկան թերակղզի յե Սիբերի հյուսիս - արևմտյան ափերին:

\*\* Սախալինը մեծ կղզի յե Սիբերի արևելյան ափերին. նրա հյուսիսային մասը պատկանում ե ՌՍՀՄ-ին, իսկ հարավային մասը — Յապոնիային:

նալը ավելի եժան կնստի, քան թե անբուսականներով կամ նույն իսկ ծովային ճանապարհով: Այսպես, որինակ, յեթե դիրիժաբլներով հաղորդակցություն սահմանվի հեռավոր-արևելյան գծով, դիրիժաբլով կարելի չե փոխադրել մի տարվա ընթացքում 2,700 տոննա ապրանք և մեկ կիլոգրամ ապրանքի փոխադրության արժողությունը 750 կիլոմետր տարածության վրա կլինի միայն 26 կոպեկ: Նավով տարեկան հնարավոր ե փոխադրել միայն յոթ հարյուր տոննա բեռ. անբուսականով կարելի չե փոխադրել միայն հարյուր հիսուն տոննա և այդ դեպքում փոխադրության արժողությունը կլինի վոչ թե 26 կոպեկ կիլոյից, ինչպես դիրիժաբլով փոխադրելու դեպքում, այլ 1 ռ. 50 կ.: Այդպիսով, դիրիժաբլով փոխադրելը վոչ միայն ավելի արագ կլինի, քան հաղորդակցության վորևեք այլ միջոցով, այլ և ավելի եժան:

Ինչպես հայտնի յե, հյուսիսում Խորհրդային Միությանը պատկանում են ահա-

գին, դեռևս բավարար չափով չուսումնասիրված տարածություններ: Ճիշտ է, հյուսիսային յերկրները ավելի ու ավելի խորը ուսումնասիրվում են. դեռ 1930 թ. ամառը ընկ. Շմիդտի եկսպեդիցիան մի նոր յերկիր գտավ ծայրահեղ հյուսիսում («Վիգեյի անվան յերկիր»-ը): Բայց և այնպես մնում են դեռ շատ հյուսիսային տարածություններ, վորոնք չեն ուսումնասիրված, չեն հետախուզված: Իսկ դեպի այդ հեռավոր, հավիտենական սառույցով ծածկված յերկրները ուղղված յուրաքանչյուր բեռնային (հյուսիսային) եկսպեդիցիա միշտ կապված է խոշոր փորձանքների հետ եկսպեդիցիայի անդամների կյանքի և առողջության համար:

Դիրիժաբլը ահագին ոգնություն կադող ե հասցնել մեզ մեր հյուսիսային անմատչելի ծայրագավառների ուսումնասիրության գործում: Այդ ծայրագավառները քիչ են ուսումնասիրված, մինչդեռ նրանց խորքերում պահված են յերբեմն ահագին հարստու-

թյուններ: Այսպես, որինակ, նույն Վամ-չատկայում Խորհրդային եկսպեդիցիան 1923 թ. բաց արավ շատ բարձր վորակի նավթի ահագին պաշարներ:

Դիրիժաբլը ունի մի հատկություն ևս, վորը չափազանց կարևոր է գիտական-հետախուզական աշխատանքի համար, — նա կարող է դանդաղեցնել թռիչքի արագությունը և նույն իսկ անշարժ մնալ: Զննելու, պլաններ հանելու, եկսպեդիցիա իջեցնելու համար դիրիժաբլի այդ հատկությունը բացառիկ նշանակություն ունի:

Վերջապես, դիրիժաբլը, ինչպես և ողային հաղորդակցության ամեն մի այլ միջոց, կարող է գործադրվել և այլ պետքերի համար: Աերոպլանները ներկայումս արդեն ոգտագործվում են դաշտերը սրակելու համար — գյուղատնտեսության վնասատուների դեմ պայքարելիս: Դիրիժաբլից այդ աշխատանքը ավելի ևս հարմար է կատարել, քան սավառակից, վորովհետև, ինչպես արդեն

շեշտեցինք, նա կարող է խոշոր չափով  
դանդաղեցնել իր արագությունը, այլ և շատ  
ավելի բեռ կարող է բարձել. նա չի պա-  
հանջում հաճախակի նստումներ՝ քիմիական  
նյութերի նոր պաշար վերցնելու համար:

Այս բոլորից միազամայն պարզ է, թե  
վորքան մեծ նշանակություն է ունենալու  
դիրիժաբլը Նորհրդային յերկրի տնտեսու-  
թյունը բարձրացնելու և կուլտուրան զար-  
գացնելու համար:

### ԴԻՐԻՃԱԲԼՆԵՐԸ ԿՈՒԺԵՂԱՑՆԵՆ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նորհրդային կառավարությունը վարել է,  
վարում է և պիտի վարի խաղաղ քաղաքա-  
կանություն: Սակայն, ինչպես ցույց տվին  
Պետքաղվարչության (Գեպեուչի) բաց արած  
հակահեղափոխական դավադրությունները,  
մեր թշնամիները ուժեղ կերպով պատ-  
րաստվում են զինված հարձակման Նորհր-

դային Միություն դեմ, վորպեսզի վիժեցնեն  
մեր խաղաղ սոցիալիստական շինարարու-  
թյունը:

Մենք պատրաստ պետք է լինենք այդ  
հարձակմանը: Մենք պետք է աճեն կերպ  
ամրացնենք մեր յերկրի պաշտպանունա-  
կությունը, ուժեղացնենք մեր կարմիր բա-  
նակի մարտական զորությունը: Պատերազմի  
պատրաստություն տեսնելով, կապիտալիս-  
տական պետությունները ներկայումս ձեռ-  
նարկել են դիրիժաբլների կառուցմանը: Դեռ  
ևս իմպերիալիստական պատերազմի ժամա-  
նակ նրանք համոզվել են դիրիժաբլի ռազմա-  
կան շատ արժեքավոր հատկությունների մեջ:

Ավելի դանդաղ կամ արագ շարժվելու  
և անշարժ դրություն մեջ մնալու հատ-  
կության շնորհիվ դիրիժաբլները դիտում  
եյին ծովերը, հետախուզում եյին նավեր ու  
նավակներ, գերի եյին վերցնում նրանց,  
տանում նավահանգիստ, մակույկներ եյին  
իջեցնում, ստուգում եյին նավերի վրա

դոկումենտները և այլն: Շնորհիվ հեռավոր  
թոփաքների ընդունակութեանը, և այն ել  
բոլոր պայմաններում (ցերեկը ու գիշերը,  
ամպամած և մառախլապատ որերին և այլն),  
դիրքաւորները ոգտագործւում եյին հառուկ  
հեռավոր թոփաքների համար: Այսպէս, որի-  
նակ, գերմանացիները դիրքաւորներից ուժա-  
գոծել եյին նույն իսկ Պարիզը, Լոնդոնը,  
վորոնք ֆրոնտից ահագին տարածութեան  
վրա եյին գտնւում. նրանք այդ թոփաքները  
սովորաբար գիշերով եյին կատարում, ահա-  
գին բարձրութեան վրա, և այդպիսով աննկա-  
տելիորեն հարձակւում եյին քաղաքի վրա:

Դիրքաւորները շատ անգամ հետևում եյին  
չրասույզ նավակներին և նրանց ներկայու-  
թեան մասին հաղորդում եյին իրենց նա-  
վատորմին, իսկ յերբեմն ել վոչնչացնում  
եյին նրանց:

Պատերազմի ժամանակ գերմանացիները  
ոգտագործում եյին դիրքաւորները հեռավոր  
ռայոնների հետ կապ պահպանելու և նրանց

պարեն հասցնելու համար: Այսպէս, որի-  
նակ, «Գրաֆ Յեպելին» դիրքաւորը թոփաք  
կատարեց Բուլղարիայից Կենտրոնական Աֆ-  
րիկա, 14 տոննա բեռ տանելով պաշարված  
գերմանական զորքերի համար և այդ ամ-  
բողջ թոփաքը նա կատարեց թշնամու տե-  
րիտորիայի վրայով:

Վերջին ժամանակներս հաջող փորձեր են  
կատարվել՝ դիրքաւորից կախ տալ սավառ-  
նակներ, վորպէսզի հետո հենց շարժման  
ընթացքում այդ սավառնակները քակել և  
ապա նորից կապել: Այդպիսով ընդլայն-  
վում է սավառնակների գործողութեան շրջ-  
ջանը, իսկ ինքը դիրքաւորը ստանում է  
հուսալի պաշտպանութիւն թշնամու սա-  
վառնակների հարձակման դեպքում:

Մասնագետները հաշվել են, վոր ռազ-  
մական հետախուզութեան մեջ 9 դիրքա-  
ւորները կարող են փոխարինել 60 կրեյսեր-  
ների (հաժանավերի): Այդպիսով, պատե-  
րազմի ժամանակ ևս դիրքաւորը կարող է


խոշոր դեր կատարել կապիտալիստական յերկրների բանականների համար—իրեն հարձակման միջոց, իսկ մեզ համար — իբրև պաշտպանության միջոց:

Խորհրդային Միության աշխատավոր մասսաները պատերազմ չեն ուզում: Մեր կուսակցությունը և խորհրդային իշխանությունը ձեռք են առնում բոլոր հնարավոր միջոցները, վորպեսզի կանխեն համաշխարհային նոր սպանդանոցը: Բայց այդ չինշանակում, վոր մենք նստելու յենք ձեռներս ծալած և սպասելու, մինչև վոր բուրժուազիան կուղարկի իր դիրիժաբլները՝ ումբակոծելու մեր խաղաղ բնակչությանը, քարուքանդ անելու մեր քաղաքներն ու գյուղերը, մեր ֆաբրիկներն ու գործարանները: Թող իմանան պատերազմի հրձիգները — մենք ձեռք ենք առնում բոլոր միջոցները, վորպեսզի Խորհրդային Միության դեմ հարձակում կատարվելու դեպքում Կարմիր Բանակի տեխնիկական սպառազի-

նումը լինի վոչ պակաս՝ բուրժուական պետությունների բանականների սպառազինումից: Խորհրդային դիրիժաբլները պիտի պաշտպանեն Խորհրդային Միության սահմանները:

## ՈՒԺԵՂԱՑՆԵՆՔ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՍԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴԻՐԻՃԱՔԼՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՍԱՐ

Դիրիժաբլի կառուցումը հեշտ գործ չե: Դիրիժաբլը համեմատաբար թանգ ե. մեկ դիրիժաբլի կառուցման մոտավոր արժեքն ե 4 միլիոն ուրբլի: Բացի դրանից, դիրիժաբլի միջոցով հաղորդակցությունը կանոնավորելու համար հարկավոր են մի շարք տեխնիկական պայմաններ: Պետք ե կառուցել կայմեր, վորոնց կարողանա մերձենալ դիրիժաբլը իջնելիս և ամրացավել նրանց — կայանի ժամանակ: Պետք ե կառուցել այսպես կոչված ելինգներ — հսկայական գարաժներ դիրիժաբլների կայանի համար: Հար-



կապոր են մի շարք այլ հարմարություններ։  
Բացի այդ բոլորից, պետք է պատրաս-  
տել դիրիժաբլի կառուցողների և վարիչ-  
ների կադրեր։ այդպիսիները մենք գրեթե  
չունենք, վորովհետև դիրիժաբլի կառուցումը  
լայն չափերով մեզ մոտ չի յեղել։

Մեկ խոսքով, դիրիժաբլի կառուցումը  
զարգացնելու համար պետք է խոշոր նա-  
խապատրաստական աշխատանք կատարել։  
Ահա թե ինչու Ոստավիաքիմի Կենտրոնական  
Խորհրուրդը վորոշել է առայժմ սկսել միայն  
չորս դիրիժաբլի կառուցումը—«Պրավդա»,  
«Կլիմ Վորոշիլով», «Կոխտոգնիկ» և «Ոստա-  
վիաքիմ»։ Յերբ մի քանի կազմակերպու-  
թյուններ թույլտվություն են խնդրել մի-  
ջոցներ հավաքելու նոր դիրիժաբլիների կա-  
ռուցման համար—«Ուկրայինա», «Ան-  
դրկովկաս», «Շինարար» և այլն,—Կենտրո-  
նական Խորհուրդը մերժել է։

Զպետք է ցրվել, չպետք է ջլատել  
ուժերն ու միջոցները։ Մեր ամբողջ ուշա-

ղբությունը կենտրոնացնենք առաջին հեր-  
թին այժմ այդ չորս դիրիժաբլիների կառուց-  
ման վրա։ Յերբ մենք կստեղծենք եսկադ-  
րիլիա թեկուզ այդ չորս դիրիժաբլիներից,  
մենք ահագին քայլ կատարած կլինենք մեր  
յերկրի տնտեսության ու կուլտուրայի զար-  
գացման ուղիով։

Դիրիժաբլիները կսավառնեն Խոր-  
հուրդների յերկրի ահագին տարա-  
ծությունների վրա, կկապեն հե-  
ռավոր ծայրագավառները կենտ-  
րոնի հետ, հետագոտական աշխա-  
տանքներ կկատարեն չուսումնա-  
սիրված յերկրներին նկատմամբ,  
մեկ խոսքով կոգնեն սոցիալիզմի  
կառուցմանը Խորհուրդների յերկ-  
րում,—դիրիժաբլիները կուժեղա-  
ցնեն մեր յերկրի պաշտպանունա-  
կությունը։



3 407.

13454

14569  
О.П. 13.



**Н. СЕМАШКО**  
**Даешь советский**  
**дирижабль!**

(Перев. с русского)

**На армянском языке.**

**ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.**  
Москва, центр, Никольская, 10.